



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ/ՌԵՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ
ՊՐՈՌԵԿՏՈՐ Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ԵՊՀ ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳՐԱՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆԻ՝ 2025 Թ. ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ
ՆԻՍՏԻ ԹԻՎ 11 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ**

ԼՍԵՑԻՆ. Մանուշ Էմիլի Բալայանի «Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի 2025 հունիսի 30-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. –Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Բալանթարյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Մեյրանյանը:

Նշվեց, որ Մանուշ Էմիլի Բալայանի «Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» աշխատանքը կատարվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Պաշտպանությունը կայանալու է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ անուրանալի է Ռուպեր Հատտեճյանի կատարած մեծ դերը ինչպես պոլսահայ և սփյուռքահայ, այնպես էլ ողջ հայ գրականության և մշակութային կյանքի ամենագանազան ոլորտներում: Մի ամբողջ կյանք մխրճվելով հայ մամուլի ամենակուլ ու սպառող աշխատանքների մեջ՝ նա հավասարաչափ զբաղվեց նաև գրական-

ստեղծագործական գործունեությամբ, գրեց գեղարվեստական էսսեներ, պատմվածքներ, թատերգություններ, վեպեր, գրականագիտական հոդվածներ, որոնցից շատերը 20-րդ դարավերջի և 21-րդ դարակզբի հայ կյանքի ուշագրավ իրողությունները պարզող բնութագրական էջեր են և մայուն արժեքներ:

Այս հիմնավորմամբ էլ արդարացվում է Մանուշ Բալայանի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այն գրականագետ Սուրեն Դանիելյանի «Ռոպեր Հատտեճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութին» ուշագրավ գրքից հետո երկրորդ փորձն է ի մի բերելու Հատտեճյանի գրական-գեղարվեստական ժառանգությունը՝ դիտված գեղագիտության տեսանկյունից:

Պոլսահայ գրամշակութային կյանքի նշանակալի ներկայացուցչի՝ գրող, հրապարակախոս, Պոլսի «Մարմարա» օրաթերթի բազմամյա խմբագրապետ Ռ. Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտական առանձնահատկությունների քննաբանմանն ուղղված սույն աշխատանքը հատկանշվում է գիտական բարեխղճությամբ, նրբամիտ դիտարկումներով և համապատկերային ընդհանրացումներով: Ներածությունից, «Փոքր արձակի կերպարակերտման արվեստը», «Հոգեբանական ապրումի գեղագիտությունը. «Առաստաղ»», «Անհատի երկվության դրսևորումները թատերախաղերում», «Հատտեճյան գեղագետը «Յուշատետր»-երի էջերում» վերնագրերով չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից բաղկացած ուսումնասիրության մեջ հստակորեն որոշադրված քայլերով, ժանրային բաժանման սկզբունքով, ժամանակագրական քննության մեթոդով հերթագայորեն բացահայտվում են ժանրային նկարագրով պայմանավորված գեղագիտական իրողությունները՝ առարկայական խորհրդանշապաշտության և գոյապաշտության տեսական ըմբռնումների լույսով: Ատենախոսը քաջատեղյակ է հարցի պատմությանը, հիմնավորված են աշխատանքի արդիականությունը և նորույթը: Արդիականության հիմնավորման բաղադրիչների շարքում, պոլսահայ գրողի և գեղագետի ստեղծագործության հանրահոշակման նպատակից զատ, իրավացիորեն նշվում են թե՛ հեղինակի աշխարհայացքի խոհափիլիսոփայական շերտերի ուսումնասիրությունը, թե՛ նրա գեղագիտական ըմբռնումները նոր դիտանկյունից արժևորելու անհրաժեշտությունը: Ընտրված դիտանկյունն իրապես նոր է. Ռ. Հատտեճյանի

վաստակը, նրա բանարվեստի նկարագիրը համակարգված ձևով ներկայացվում են ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության համաբնագրում:

Բալայանը կարևորում է պատմվածքի ժանրի կոմպոզիցիոն հնարավորությունների բազմազանության հատտեճյանական կիրարկումները՝ աբսուրդային իրադրային լուծումները, միստիկական դրվագները, հերոսների ներքին մենախոսությունը, օրագրային գրառումներով և նամակներով ձևակերտված դիպաշարային զարգացումները: Ուսումնասիրողի տեսադաշտում են գեղագետի և պատմամշակութային իրականության կապը ներկայացնող գեղարվեստական իրողությունները, անհատի և հասարակության փոխառնչության կերպերը գոյապաշտական աշխարհայեցողության տեսանկյունից, գրողի կերպարաստեղծման հմտությունները, ազգային և համամարդկային արժեքանական շեշտադրումները: Կարևորվում և քննվում են գրողի իմաստասիրական հայեցակերպը, հոգեփիլիսոփայական մոտեցումը, մարդու ինքնատիպության, միայնության և ներանձնացման խնդիրների, կյանքի և մահվան փոխհարաբերության ընկալման գեղարվեստական արծարծումները, սերունդների երկխոսության անհրաժեշտության հրամայականը: Հատտեճյանի մտահայեցողության առանցքում ժամանակակից մարդն է՝ ընդլզման ու համակերպման տազնապների, աշխարհը բարեփոխելու որոնումների մեջ: Ժամանակակից մարդը, ատենախոսի ընդհանրացմամբ, Հատտեճյանի պատմվածքներում ներկայանում է ազատության հասկացույթի, տառապանքի և որոնման՝ գոյապաշտական արձակին ներհատուկ լուծումների մեջ, հերոսի երկվության, ժամանակավոր անկման և մաքառման կամքի դրսևորումներով, աբսուրդի և զավեշտի, իրականի ու երևակայականի, արտասովորի և առօրեականի ներգործման դաշտում:

Անդրադառնալով հատտեճյանական վիպական կառույցին՝ Բալայանը դրա նկարագրի առանցքում տեսնում է մասնավորաբար ազգային գոյաբանական խնդիրների արծարծումը՝ համապատասխան խորհրդապատկերային արտահայտություններով:

Դրամատիկական երկերի քննաբանումն իրացվում է առարկայական խորհրդանշապաշտության և գոյապաշտության գեղարվեստական իրողությունների համադրական դրսևորումների, ընտանեկան և անհատական չափումներով՝ մարդու

բարոյականության խնդիրների, ազատության ու պատասխանատվության սահմանների, մարդու բնավորության բազմաշերտության տեսանկյունով:

Ատենախոսն իր մանրաշխատ ջանքն ուղղել է նաև Հատտեճյանի հուշագրությունների, ուղեգրությունների, գրաքննադատական վերլուծությունների քննությանը: Հայրենական, արևմտահայ ու սփյուռքահայ հեղինակների առնչությունների, նրանց երկերի ձևաբովանդակային նկարագրի, թեմատիկ ընդհանրությունների, ստեղծագործական պատմությանն ուղղված հատտեճյանական բացահայտումների ու արժևորումների, բանասիրական փաստական ճշտումների քննությունը ատենախոսին հնարավորություն է ընձեռել կարևոր ընդհանրացումներ կատարելու պոլսահայ գրագետի գեղագիտական ըմբռնումների վերաբերյալ:

Բալայանն իր աշխատությունը գրելիս ուսումնասիրել է մամուլի (հատկապես պոլսահայ) էջեր, օգտագործել գրողին վերաբերող փաստեր, վկայություններ ու գնահատումներ, այս կամ այն գրական երկը քննելիս առաջադրել տեսակետներ, հանգել որոշ գիտական եզրակացությունների, որոնք և նրա ատենախոսությանը հաղորդել են գիտական բնույթ և գրականագիտական արժեք:

Հատտեճյանի գրականության վերաբերյալ այն կարծիքն է հայտնվել, որ նրա շատ գործեր «ազգություն չունեցող» գրողի արտահայտություններ են, և այդ գործերում բացակայում են «արյան կանչ» մատնանշող գաղափարներ և զգայնություններ: Մերժելով նման տեսակետները, ընդգծելով հանդերձ, որ Հատտեճյանի մի շարք գործերում գերակշիռ են մարդու ազատության և պատասխանատվության հարցադրումները (որոնք, հետաքրքիր լինելով հանդերձ, միշտ չէ, որ գեղարվեստական անհրաժեշտ որակներ են դրսևորում)՝ Բալայանը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ համամարդկայինից դեպի համազգայինը կատարված խորացումը Հատտեճյանի գրականության յուրահատկությունն է, և պետք է կարողանալ տողամիջում ընթերցել այդ ամենը:

Մարդու ներաշխարհի և միջավայրի միջև առաջացած խզումը, ելքի որոնման մտասևեռումները՝ դիտված հոգեբանական ու փիլիսոփայական հայեցակետերով, Հատտեճյանի, այսպես ասած, «գոյաբանական գրականության» հենց վերոհիշյալ միտման ամենաբնորոշ արտահայտությունն են, որտեղ անցյալը, ներկան և երևակայական ապագան հանդես են բերվում միասնական հյուսվածքով:

Խեղճության և մեծության նախադրյալները, ըստ գրողի, մարդու մեջ են, և Հատտեճյանը կերտել է ներապրումներով հարուստ կերպարներ: Բալայանը նկատել է տալիս, որ այդ ներապրումները հերոսներին տանում են հոգեբանական ընդլվզումների, ինքնավերլուծական մոլումների և եզրահանգումների: Լքված մարդը և անտարբեր շրջապատը, այսինքն՝ օտարացումը ամեն ինչից՝ հարազատներից, զավակներից, ամեն մարդկայինից, Հատտեճյանի գրականության հիմնական թեմաներից մեկն է: Բալայանը աշխատանքում այն քննության է ենթարկել ամենայն մանրամասնությամբ, պատճառաբանել ու մեկնաբանել դրանք ծնող հանգամանքները, որոնց մեջ բոլորովին էլ երկրորդական չի նկատել օտարացում հասկացության մեկ այլ դրսևորումը՝ օտարության մեջ՝ հայրենի եզերքից դուրս գտնվելու հանգամանքը:

Ընդհանրության մեջ հաջողված այս աշխատանքում տեղ են գտել նաև էական թերություններ ու վրիպումներ, որոնց շտկման դեպքում, կարծում ենք, այն կդառնա ավելի ամբողջական.

1. Անհրաժեշտ էր առավել բժախնդիր լինել Հատտեճյանի երկերի գեղարվեստական-արժեքաբանական նկարագրի գնահատումներում: Օրինակ՝ աշխատանքի 3-րդ էջում ասվում է, որ գրողը «նոր հուն» է բացել, բայց այդպես էլ չի բացահայտվում այդ նոր հունը: 19-րդ էջում նշվում է, որ «...նրա ստեղծագործությունը անհատականացնող» մյուս բնութագիրը «կերպարաստեղծման արվեստի նոր եղանակն» է, բայց այդ եղանակը նույնպես չի բացահայտվում աշխատանքում: Առհասարակ պետք է ասել, որ չափազանցված են Հատտեճյան գրողին տրված գնահատականներն ու բնորոշումները, հաճախ էլ գերակշռում է պատկերավոր խոսքը: Ողջ աշխատանքում չկա և ոչ մի տող այդ գրականության թերությունների կամ պակասությունների վերաբերյալ:

2. Ատենախոսության մեջ կան կան չհիմնավորված որոշ դրույթներ և ձևակերպումներ, որոնք ոչ մի քննադատության չեն դիմանում: Օրինակ՝ ի՞նչ փաստի հիման վրա է ասվում, որ Գեղամ Սևանը խորհրդային համակարգի պարտադրանքով անտեսում էր Հատտեճյանի գրականությունը (տե՛ս էջ 9): Հատտեճյանի ենթադրությունը քիչ է նման բան գրելու համար: 125-րդ էջում, դարձյալ կրկնելով Հատտեճյանին, հեղինակը գրում է, որ զանազան հայեր «կրօնափոխ եղած ու իրենց կյանքը ազատած էին», և բերվում է Օտյանի օրինակը. «Օտեան անոնցմե մեկն էր»: Սա

կոպտագույն սխալ է, քանի որ Օտյանը ընդամենը անունն է փոխել (Ալի Նուրի), բայց երբեք՝ կրոնը: Մեկ այլ տեղ ասվում է, թե «... սոցիալիստական ռեալիզմի կադապարները խոչընդոտում էին հայրենական գրականության մեջ ժամանակի բնականոն առաջընթացին արժանի թատերգական գործերի ստեղծումը» (էջ 90): Մինչդեռ Դերենիկ Դեմիրճյան թատերագիրը բավական հաջող ստեղծագործել է հենց սոցիալիստական ռեալիզմի շրջանում: Անկախության շրջանում թատերգության ասպարեզում հող պատրաստելն ու «նորարարական ձգտումներն» էլ դեռ չեն նշանակում, որ գրական նվաճումներ են կատարվել: Այս համատեքստում առնվազն անհիմն է հնչում այն արձանագրումը, թե պոլսահայ Արման Վարդանյանը ստեղծեց... համաշխարհային չափանիշներին մերձեցող թատերգություն (էջ 91):

3. Առկա են նաև գրականագիտական բնույթի անհաջող դրույթներ: 17-րդ էջում այն միտքն է հայտնվում, որ 70-ական թթ. Հատտեճյանը նոր շունչ ու ոգի հաղորդեց պոլսահայ գրական ընտանիքին, և պոլսահայ գրականությունը այլ դիմագծով ներկայացավ աշխարհին: Բայց չէ՞ որ 60-ականներին արդեն գրքեր էին տպագրել Զահրատը, Խրախունին, Վ. Շիկահերը, մամուլում տպագրել առանձին գործեր: Էլ չենք ասում Մառքի, Մնձուրու մասին, ովքեր շատ ավելի վաղ էին հանդես եկել:

4. Աշխատանքի 3-րդ գլուխը նվիրված է Հատտեճյանի թատերգության մեջ անհատի երկվության դրսևորումներին: Հենց այդպես էլ վերնագրված է՝ «Անհատի երկվության դրսևորումները թատերախաղերում»: Բայց չէ՞ որ աշխատանքի վերնագիրը ասում է, որ քննության նյութը գեղագիտությունը պիտի լիներ, այսինքն՝ գեղագիտականի դրսևորումները: Եվ հետո. մի՞թե այդքան ընդգրկուն է Հատտեճյանի թատերգությունը, որ առանձնացվել է նրա ընդամենը մի մասնահատվածը: Ինչո՞ւ են անտեսված թատերգության գրական-գեղարվեստական մյուս արժեքները:

5. Ատենախոսության մեջ նկատվում են նաև մեթոդաբանական բնույթի անցանկալի լուծումներ: Աշխատանքի ողջ ընթացքում անընդհատ օգտագործված է «մեր կարծիքով...» արտահայտությունը, որը բոլորովին ավելորդ է, քանի որ այն ամենը, ինչ գրված է, ուրիշի կարծիքը չէ, բնական է, որ աշխատանքի հեղինակի կարծիքն է: Չարաշահված են Ս. Դանիելյանից կատարված մեջբերումները, որոնք տասնյակների են հասնում: Չափազանցություն է Հատտեճյանի գրականության մեջ ամեն բան գոյաբանական (եքզիստենցիալիստական) հոսանքի տեսանկյունով

մեկնաբանելու միտումը: Ատենախոսի՝ գոյապաշտության գաղափարագեղագիտական համակարգի իմացությունը կասկած չի հարուցում, սակայն հարկ էր գիտական հետազոտության մեջ այն ներկայացնել տեսական առավել հիմնավոր և խորքային շերտով՝ արտացոլելով նաև գրականության ցանկում:

Առկա են նաև անվերծանելի ձևակերպումներ: Օրինակ՝ ատենախոսը գրում է, որ «... յուրաքանչյուր կերպար տարբեր ձևով է ընկալում կյանքի և մահվան հարաբերությունը. գուցե դրանի՞ց է, որ նրանք հաճախ դառնում են խոցելի կամ առօրյան փորձում են քողարկել հեգնանքի և ժպիտի դիմակի տակ» (էջ 20): Կերպարը ինչպե՞ս կարող է այդ ամենը անել: Չէ՞ որ կերպարը գրական հասկացություն է, չի կարող «ընկալել», «դառնալ», «քողարկել»: Անհասկանալի է 43-րդ էջում առկա հետևյալ ձևակերպումը. «Մարդու խեղճության ամենաակնառու դրսևորումը մահն է, սակայն երբ մահից հետո էլ նա ուրիշներին տալիք ունի, այդ անկումը թվում է անկասելի և վերջնական»: Անորոշ է Հատտեճյանից բերված հետևյալ նախադասությունը. «Ամբողջ օրը անցանք... գիւղերու ու գիւղացիներու մեջէն» (էջ 43):

6. Աշխատանքում տեղ են գտել նաև լեզվական, տերմինաբանական ու տեխնիկական բնույթի վրիպումներ: Մի առիթով աշխատանքում գրված է, որ Կոմիտասը տարագրությունից հետո «ապրեցեալ... սնամեջ կեանք մը»: Կարծում ենք՝ «սնամեջ» բառը աքսորից վերադարձած Կոմիտասի դրաման բնորոշող ամենից դիպուկ բառը չէ: Պոլսահայ նորատարազ բանաստեղծությունը բնորոշող գիտական եզրը «առարկայական խորհրդանշապաշտությունն» է, որն աշխատանքում նշված է «առարկայական խորհրդապաշտություն» տարբերակով (էջ 6, 57, 98):

Օգտագործված գրականության ցանկը կազմված է այբբենական սկզբունքով, մինչդեռ ընդունված է, որ հեղինակի գործերը սկզբում են նշվում: Նույն այդ ցանկում կարիք չկար առանձին-առանձին թվարկելու գրողի «Յուշատետր» շարքի մասերը: Անհրաժեշտ էր նշել միայն տարեթվերը և համարները:

Նշվեց, սակայն, որ պաշտպանության է ներկայացված գնահատման արժանի հեղինակին նվիրված ծավալուն և ամբողջական մի ուսումնասիրություն, որ ընդհանրության մեջ հաջողված ատենախոսություն է:

Ամփոփելով դիտարկումները՝ ելույթ ունեցողները նշեցին, որ գնահատելի են թե՛ Ռոպեր Հատտեճյանի գրամշակութային վաստակի և գեղագիտական

ըմբռնումների բացահայտմանն ուղղված ջանքը, թե՛ կատարված ընդհանրացումների գիտական կշիռը: Հատտեճյանը եղավ հայ գրի մշակ, որ իր կյանքով ու գործով շարունակեց տերը մնալ հայ գրական պարտեզի՝ «...չարտօնելով, որ այդ պարտեզը տակաւ ամայանայ»: Գեղագիտական ճաշակը, սահուն ու հանդարտ գրելաոճը, կյանքի համակողմանի ճանաչումը, խոր գիտելիքները, մարդու ներաշխարհային խորքերը թափանցելու ունակությունը Հատտեճյանի գրականությունը բնութագրող հատկանիշներն են: Ատենախոսության հեղինակ Մանուշ Բալայանը հենց այդ ելակետերով էլ շարադրել է իր աշխատանքը, որը համապատասխանում է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Մանուշ Էմիլի Բալայանի «Ռուպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» ուսումնասիրությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության պատմության
և գրաքննադատության ամբիոնի վարիչ՝



Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիստի քարտուղար՝



Ն. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՂՂ գիտարարողար՝



Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

30. 06. 25թ.

